

հովիւների լարաբերութեան խնդիրը Մալը Աթոռի հետ և տեղեկագրել իրան:

Հետևանքի մասին մենք կհաղորդենք իւր ժամանակին մեր ընթերցողներին:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐԶԸ

1896 թուականի սարսափների պատճառով Տաճկահայաստանից Ռուսիա ապաւինած գաղթականները տարւոյս օգոստոս ամսին խմբերով սկսան վերադառնալ հայրենիք կարսի վրայով: Դոցա վերադարձը դիւրացնելու համար՝ Ազգիս վեհափառ Հայրապետը կարուց լաջորդին առանձին կոնդակով պատուիրեց անձամբ գնալ գաղթականների մօտ և լալանել, որ նոքա կամ աշխատեն ընդունել ռուսահպատակութիւն, կամ վերադառնան Տաճկաստան ալ կողմերից և կամ անցնել Պարսկաստան, որտեղից կարող են վերադառնալ հայրենիք Մակուի խանութեան վերայով:

ՓԱՐԻՋԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԷՔԸ

Յալտանի հարուստ և բարեգործ Պ. Աղէքսանդր Մանթաշեանը, Վանքի աւագ եկեղեցին ի ներքուստ հոյակապ կերպով նորոգել տալուց լետով, այժմ մի փառաւոր եկեղեցի է կառուցանում Պարիզում տեղական հալ գաղութի համար, որոնց թիւը 250 ընտանիքի է հասնում, բացի բազմաթիւ ուսանողներից: Տեղը ընտրուած է ամենազլխաւոր փողոցում, Եանդէլիզէի վերայ և այս օրերս կատարուել է հիմնարկէքի հանդէսը Եւրոպայի հալոց Առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս իւթիւճեանի ձեռքով: Սակայն ցաւօք սրտի պիտի ասենք, որ Հայաստանեայց եկեղեցու այդ նուիրական և շքեղ հանդէսը, ինչպէս հաղորդում է «Բիւզանդիոն» լրագրին նորա Պարիզի թղթակիցը, կատարուել է շատ անշուք կերպով և Մալը Մաշտոցի սահմանած կարգերը չեն պահպանուել ըստ պատշաճին:— Եւրոպիոյ առաջնորդ սրբազանն, գրում է այդ թղթակիցը, օգտուելով բարիզաբնակ ժողովրդեան միամտութենէն և կամ անտարբերութենէն, բայց չուսալով որ կյանուին մէկ և կամ երկու շափկող անձինք,— արարողութիւնը փոխանակ ըստ Մաշտոցի կատարելու, համարձակութիւն ունեցաւ առանց զգեստաւորուելու վեղարով, առանց խաչ և գաւազանի, հիմնարկէքի 16 քարերը մի առ մի օծելէ և միւռոնաշաղախ մատներով անմիջապէս խնկարկելէ ետեւ, գոցել տալու:... Եթէ ստոյգ են լրագրիւնների հաղորդածները, կարելի է հիաս-

թափուել սրբ. Գէորգ եպս Իւթիւ ճեանից. միթէ Եւրոպայի հայոց-առաջնորդ լինելն ո՛ւմ երցէ իրաւունք է տալիս հայոց եկեղեցու հիմն ական կարգերը «ալաֆրանկա» կատարելու. միթէ առաջ նորդը չպէտք է լինէ ձեռնադրուելու ժամանակ եկեղեցու նորան տուած պատուէրները, երբ նա ուխտուած է հաւատարիմ լինել եկեղեցու վարդապետութեան, նորա սուրբ Հարկրի դըրած կանոններին և ծէսերի ու արարողութեանց անթերի կատարման: «Որ քակէ զճանկ հայրենի, խածանէ զնա օձ անապատի»:

Մ. ՆԱԼԲԱՆԳԵԱՆՑԻ ԵՐԿԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն. Նախիջևանից մեղ հաղորդում են, որ տեղւոյն Հայոց բարեգործական ընկերութիւնը որոշել է առանձին գրքերով տպագրել Ռ. Պատկանեանցի պնտիպ և Մ. Նալբանդեանցի տպած և անտիպ բոլոր երկասիրութիւնները:

Տ. ՄԱԿԱՐԵԱՆԻ ԿՏԱԿՐ

Նորերս վախճանուած տ. Մարիամ Մակարեանը, ի միջի ալրոց կտակել է 3000 ուսուրլի հայոց դրամատիքական ընկերութեան, որպէս զի այդ գումարի տոկոսիքը իւրաքանչիւր տարի մրցանակ տրուի հայերէն լեզուով գրուած լաւագոյն դրամատիքական գրուածներէ: 1000 ուսուրլի Ներսիսեան Հոգևոր Դպրոցին չքաւոր աշակերտների համար, 1000 ուսուրլի Վերալի հայոց եկեղեցուն, որի տոկոսիքը իւրաքանչիւր տարի զատկի տօնին պէտք է բաժանուի աղքատներին, 1000 ուսուրլի Թիֆլիսի հայուհեաց բարեգործութեան ընկերութեան, որպէսզի այդ գումարի տոկոսիքով մի աղքատ աղջիկ կրթուի:

ՂՈՒԿԱՄԵԱՆ ԹԱՆԳՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՆԳՈՒՄԵՐ

ՄԿԻՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց Մայրաքոյն Պատրիարք համաղգական նախամեծար աթոռ. Սրարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի. Մնայուն Յանձնաժողովոյ կրօնա-պատմական թանգարանի Վանաց առաջ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ:

Հիմնադիրն թանգարանիդ մեծարգոյ պ. Աւետիսն Բալայեան Ղուկասեանց գրութեամբ ծանուցեալ մեղ զվաղահաս մահուանէ երկուց պիտանի անդամոց դորին՝ Գէորգայ Եւանդուլեան և Աղէքսանդրի Երիցեանց, խնդրէ ի տեղի նոցա նըշանակել զպ. Նիկողայոսն Տէր Յարութիւնեանց Յարոյ և զպ.